հետտական կերպով զարգացած է մի գեղեցիկ ծառաստան։

Հողը խանական է. պատկանում է Հաճի, Ալի-Մահմէտ և Աբդօլլահ խաներին. գիւղացիներից միայն երկու տուն հող ունեն, իսկ մնացեալները հողազուրկ են. նրանք մշակում են աղաների հողերը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց. մօտաւորապէս տարեկան 400 բեռ ցորեն և գարի են վճարում և 69 թուման էլ պետական հարկ են տալիս։ Հողը մեծ մասամբ ջրովի է։

Գիւղն ունի մի փոքրիկ և խղճուկ դպրոց Ս. Յովհաննու եկեղեցու վերին յարկում, որ աւելի շուտ խալիֆայական է, ուր այս տարի սովորում էին 25 աշակերտ-աշակերտուհիներ մի ուսուցչուհով։

Գիւղին կից տարածւում են նրա այգիները, իսկ արևմտեան կողմում գտնւում է աղայի դալան։

Գիւղացիութիւնն այստեղ իր վիճակից շատ գոհ է. նա ապրում է հանգիստ պայմանների մէջ և դա շնորհիւ աղաների բարեացակամ վերաբերմունքին, բայց մի հանգամանք, որ աչքի է ընկնում՝ դա ջրի պակասութիւնն է, որի պատճառով հունձքը շատ անգամ անյաջող է լինում, ինչպէս 1917 թւին, որից առաջ է եկել սովը և որին զոհ են գնացել ութը հոգի։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	108
2	Չունևոր	50
3	Միջակ	70
4	Ունևոր	50
5	Հարուստ	—
	Ընդամենը	278

ՀԱԴԱՆ

Ազնաւուլից դէպի հիւսիս-արևելք, մօտ մէկուկէս ֆարսախ հեռու, բլրի լանջին, մի ընդարձակ տափարակի վրայ է փռուած Հադանը. սա զուտ հայաբնակ է, որ հարուստ է